ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ



2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ 3

Առաքելությունը 3

Իրավական հիմքերը 4

Գործառույթների հիմնական շրջանակը 5

Մաս 2. 2026 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

2.1 ԻՆՔՆԱՇԽԱՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ 7

2.1.1 ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

2.1.2 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026ԹԹ.) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ 8

2.1.3 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9

2.1.4 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10

2.1.5 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 11

2.2 ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 12

2.3 ԸՆԹԱՑԻԿ ՄԾՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 13

2.3.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԾՏԱԴԻՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14

2.3.2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 16

2.3.3 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԾՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 16

2.3.4 ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ՄԾՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 20

2.3.5 ԹՎԱՅՆԱՑՈՒՄ 21

2.4 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԺ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ 22

2.5 ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 23

2.6. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ 25

ՄԱՍ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 27

ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովման նպատակով, 2015 թվականի մարտի 25-ին «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով ստեղծվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը:

2026 թվականին Բյուջետային գրասենյակը շարունակում էր իր առաքելությունը՝ ապահովելով Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին անկախ մասնագիտական աջակցություն, տեղեկատվության տրամադրում և անաչառ վերլուծությունների իրականացում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ազգային ժողովի բյուջետային գրասենյակի առաքելությունն է՝ ապահովել Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և այլ շահագրգիր կողմերին անկախ մասնագիտական աջակցություն, տեղեկատվություն և ընթացիկ անաչառ վերլուծություններ պետական բյուջեի, հարկաբյուջետային քաղաքականության, պետական ֆինանսների կառավարման և մակրոտնտեսական զարգացումների վերաբերյալ:

Գործառութային անկախությամբ օժտված բյուջետային գրասենյակը Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի ընդունման և կատարման նկատմամբ վերահսկողությանը նպաստելու նպատակով տրամադրում է մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն:

Բյուջետային գրասենյակն իր կարողություններն անընդհատ զարգացնելով պատրաստ է մասնագիտական ծառայություններ մատուցել Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին:

Բյուջետային գրասենյակի կողմից տրամադրվող տեղեկատվությունն անկախ է, զերծ քաղաքական ուղղորդումից, դիտարկումից, եզրակացությունից, դատողությունից կամ մեկնաբանությունից:

Այս անկախությունը ապահովում է, որպեսզի տրամադրվող տեղեկատվությունը կամ մասնագիտական աջակցությունը արդյունավետ օգտագործվի քաղաքականության մշակման և քաղաքական բանավեճերում:

Մեր թիմը պատրաստ է համագործակցել Ազգային ժողովի բոլոր պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների անդամների հետ:

Տեղեկատվության սպառողները կարող են համոզված լինել և վստահել մեր կողմից տրամադրվող տեղեկատվությանը, անաչառությանն ու գաղտնիությանը:

Մեր առաքելությունն է՝ ստեղծել ժամանակակից և համակարգված փվյալների շտեմարան, որը կապահովի տեղեկատվության արդյունավետ հավաքագրում, վերլուծում և կառավարում՝ հնարավորություն տալով առավել արագ, ճշգրիտ և համակարգված արձագանքել բոլոր հարցումներին և ապահովել ճիշտ, թարմացված և ժամանակին տեղեկատվության տրամադրում տարբեր ժամանակահատվածների համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բյուջետային գրասենյակի դերն ու գործառույթները սահմանվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և ՀՀ Ազգային ժողովի 2016թ. դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱԺՈ-267-Ն որոշմամբ սահմանված ***Ազգային ժողովի աշխատակարգով***[1]*:*

Բյուջետային գրասենյակն օժտված է գործառութային անկախությամբ, քաղաքական իրադարձություններին և նպատակներին գնահատական չի տալիս:

Բյուջետային գրասենյակի փորձագետը հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն:

Բյուջետային գրասենյակն իր գործունեությունն իրականացնում է գործառույթներին վերապահվող իրավական ակտերին համապատասխան:

Բյուջետային գրասենյակը մասնագիտական աջակցությունն ու տեղեկատվությունը տրամադրում է պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին:

Նախորդ տարվա պետական բյուջեի կատարման և առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագրերի վերաբերյալ տեղեկանքները տրամադրվում են ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին:

Բյուջետային գրասենյակն իր կատարած աշխատանքների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվություններ է ներկայացնում իրավասու մշտական հանձնաժողով: Գրասենյակի գործունեության վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

[1] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5711&lang=arm
http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6519&lang=arm

Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը և մշտադիտարկումը իրականացնում է իրավասու մշտական հանձնաժողովը:

Բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատանքի անմիջական համակարգումը, կազմակերպումը և վերահսկումն իրականացնում է Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը, որը պատասխանատու է Բյուջետային գրասենյակի գործառույթների պատշաճ իրականացման համար:

Բյուջետային գրասենյակն իր գործառույթներն իրականացնելիս օգտվում է ՀՀ պաշտոնական փաստաթղթերից, տեղեկատվությունից և պաշտոնական կայքէջերից, մասնավորապես, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ կանտրոնական բանկի կայքէջերից և «LSFinance» ու «LSrep» ծրագրային համակարգերից:

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Բյուջետային գրասենյակն, ԱԺ աշխատակարգի համաձայն, Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի ընդունման և կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում տրամադրում է մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն հետևյալ ուղղություններով[2].

- *Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ներկայացման, քննարկման և ընդունման վերաբերյալ*
- *Պետական բյուջեի կատարման ընթացքի մշտադիտարկում,*
- *Պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային, տարեկան հաշվետվության վերաբերյալ,*
- *Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների մասով,*
- *ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների զարգացումների վերաբերյալ,*
- *Միջնաժամկետ ծախսային ծրագրի վերաբերյալ,*
- *Պետական և համայնքային բյուջեների հետ առնչվող այլ փաստաթղթերի ու իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ,*
- *Ազգային ժողովի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում հանրային ֆինանսների ոլորտում, այդ թվում ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպում, ինչպես*

[2] http://www.parliament.am/budget_office.php?sel=about&action=legal&lang=arm

նաև ծրագրային բյուջետավորման ներդրման և կատարելագործման աշխատանքներում,

- *ԱԺ պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին՝ հարցերի, հարցումների և հարցապնդումների ձևակերպման գործում:*

Ստորև ներկայացվում է Բյուջետային գրասենյակի՝ ԱԺ աշխատակարգով սահմանված գործառույթների հիմնական շրջանակը, խմբավորված ըստ բովանդակության՝

- ***ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստում***.
- ***հարցումներ****ի հիման վրա տեղեկանքների և այլ տեղեկատվության պրամադրում,*
- ***ընթացիկ մշտադիտարկում****՝ պետական բյուջեի և սոցիալ-տնտեսական զարգացումների առցանց մշտադիտարկում, իրավիճակը բնութագրող տեղեկանքների պրամադրում, վերլուծությունների իրականացում և պրամադրում, շեղումների և կատարողականի գնահատումներ.*
- ***կարողությունների զարգացում և փվյալների արդյունավետ կառավարում****՝ մասնակցություն աշխատաժողովներին, կարողությունների և հմտությունների զարգացում՝ արագ, արժանահավատ և հստակ արձագանքման կարողությունների զարգացման նպատակով,*
- ***այլ աշխատանքներ,*** *որոնք թեև նախատեսված չեն ԱԺ աշխատակարգով, սակայն նախատեսված են պաշտոնի նկարագրով:*

ՄԱՍ 2. 2026 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ազգային ժողովի բյուջետային գրասենյակի 2026 թվականի ինն ամիսների հաշվետվությունը արտացոլում է Ազգային Ժողովի աշխատակարգով սահմանված գործառույթների և լիազորությունների շրջանակներում իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդունքները, ինչու չէ, նաև այն տեսլականը, որին ձգտում է հասնել ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակը:

2026 թվականի ինն ամիսներին Բյուջետային գրասենյակն իր գործառույթներն իրականացրել է Բյուջետային գրասենյակի կազմում ներգրավված համակարգող փորձագետի և 3 փորձագետների միջոցով: Բյուջետային գրասենյակի կազմը և փորձագետների լիազորությունների շրջանակները ներկայացված են ԱԺ պաշտոնական կայքէջի համապատասխան բաժնում[3]:

[3] Տես. http://www.parliament.am/budget_office.php?sel=about&action=structure&lang=arm

Գրասենյակը մշտապես կարևորում է փորձագետների մասնագիտական կարողությունների և հմտությունների շարունակական կատարելագործումը՝ նպատակ ունենալով բարելավել մասնագիտական աջակցության և տրամադրվող տեղեկատվության մատչելիությունն ու գործնական արժեքը օգտագործողների համար:

Հաշվետու ժամանակահատվածում Բյուջետային գրասենյակը շարունակել է իր աշխատանքերը՝ տրամադրելով հավաստի, մատչելի, արժանահավատ և վերլուծական տեղեկատվություն՝ նպատակ ունենալով շարունակաբար կատարելագործել տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և ձևաչափը ժամանակի պահանջներին և տնտեսական զարգացումներին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում Բյուջետային գրասենյակի ուշադրության կենտրոնում են եղել գործառույթների հետևյալ ուղղությունները.

2.1 ԻՆՔՆԱՇԽԱՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Բյուջետային գրասենյակը 2026 թվականի ինն ամիսներին իրականացրել է մի շարք **ինքնաշխատ գործառույթներ**, որոնք իրականացվում են **իրավական ակտերով սահմանված դեպքերում և ժամկետներում**: Այս գործառույթները ներառում են իրավական փաստաթղթերի, ծրագրերի, հաշվետվությունների վերլուծություն և համառոտ ներկայացում՝ համապատասխան շահառուներին տրամադրելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում բյուջետային գրասենյակը ինքնաշխատ գործառույթների շրջանակներում ուսումնասիրել է.

- **Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները,**
- **ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 2025 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը,**
- **2025 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը,**
- **2026 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը**
- **2026 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:**

2.1.1 ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բյուջետային գրասենյակի մասնագիտական աջակցությունը ներառում է նաև հաշեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների դրտարկումը, որոնք պետական

բյուջեի և ֆինանսական համակարգի արդյունավետության վերահսկողությունն են ապահովում:

Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները, որպես կարևոր գործիք, հնարավորություն են տալիս արդյունավետ վերահսկելու պետական ֆինանսական համակարգի աշխատանքը՝ բացահայտելով ձեռքբերումներ, սխալներ և չարաշահումներ: ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի մասնագիտական աջակցությունը ներառում է այս եզրակացությունների մանրամասն վերլուծությունը, մշտադիտարկումն ու ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս ստանալ թե՛ թվային, թե՛ բովանդակային տեղեկություններ և ապահովել տվյալների խորացված ուսումնասիրություն, որոնք կօգնեն հետագա աշխատանքում արդյունավետության բարձրացմանը՝ հատկապես ուշադրությունը կենտրոնացնելով պետական գնումների ոլորտին:

- Իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության լրացուցիչ ուսումնասիրություն և տեղեկատվության ներկայացում:
- Իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության լրացուցիչ ուսումնասիրություն և տեղեկատվության ներկայացում:
- Իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության ուսումնասիրություն և տեղեկատվության ներկայացում:
- Իրականացվել է Հաշվեքննիչ պալատի Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների ուսումնասիրություն և դրա վերաբերյալ տեղեկանքի տրամադրում:

2.1.2 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026ԹԹ.) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ կառավարության 2025թ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը (այսուհետ՝ Զեկույց) Գրասենյակի կողմից ուսումնասիրվել է սոցիալ-տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության հատվածներով:

Զեկույցը մանրամասն ուսումնասիրվել է Բյուջետային գրասենյակի կողմից՝ իր գործառույթների պատշաճ իրականացման նպատակով, այն է՝ ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի, ինչպես նաև ԱԺ նիստերում դրա քննարկման ընթացքում հնարավոր հարցերի և հարցադրումների ձևակերպմանն աջակցելու նպատակով: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից ներկայացված Զեկույցի ուսումնասիրման շրջանակներում Բյուջետային գրասենյակի

կողմից հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ կառավարության ծրագրով նախանշված ոլորտային նպատակների և արդյունքների ծրագրված և փաստացի ցուցանիշների համեմատությանը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից այդ նպատակների իրագործման ուղղությամբ իրականացված ոլորտային քաղաքականությունների զարգացումներին: Հարկաբյուջետային ոլորտում դիտարկվել են՝

- տնտեսական քաղաքականությունը և ոլորտային քաղաքականությունների զարգացումները,
- պետական բյուջեի եկամուտները և ծախսերը,
- թիրախային ցուցանիշներն ու դրանց կատարողականը:

Բյուջետային գրասենյակը մասնակցել է ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին, որտեղ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2025 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը, ծանոթացել հնչեցված հարցերի պատասխաններին, արձանագրված մի շարք դիտարկումներ հետագայում ներառվել են ընթացիկ աշխատանքներում:

2.1.3 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2025թ. պետական բյուջեի կատարման մասին ՀՀ Կառավարության կողմից ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և գլխադասային հանձնաժողով են ներկայացվել համապատասխան փաստաթղթի **ամփոփ նկարագրերը**, կից գծապատկերներով ու աղյուսակներով, որտեղ ներկայացվել է ամփոփ տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում սոցիալ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների, քաղաքականությունների և շեղումների վերաբերյալ[4]:

Բացի այդ, սահմանված կարգով ԱԺ գլխադասային և մյուս մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում ՀՀ 2025թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ քննարկումների ընթացքում համապատասխան հանձնաժողովներին մասնագիտական աջակցություն և բյուջեի կատարման վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու նպատակով ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և ըստ գործունեության ոլորտների ԱԺ մշտական հանձնաժողովներին են ներկայացվել բյուջետային գլխավոր կարգադրիչ

[4] http://www.parliament.am/budget_office.php?sel=reports_and_statements&action=quarterly_reports&lang=arm

հանդիսացող մարմինների պատասխանատվությամբ իրականացված ծրագրերի և միջոցառումների գծով 2022-2025 թվականների ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների վերաբերյալ համեմատական տեղեկանքներ, այդ թվում՝ քաղաքականության միջոցառումների գծով սահմանված արդյունքային չափորոշիչներն ու ցուցանիշները համադրված նախորդ տարիների ցուցանիշների հետ, ծախսերի կատարողականը ծրագրային բյուջեի ձևաչափով, ներառյալ 2025 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից և վերադաս ԲԳԿ հանդիսացող մարմնի նախաձեռնությամբ սահմանված կարգով կատարված վերաբաշխումների և փոփոխությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր մարմնի գծով առանձնացվել են նաև բյուջետային ուղերձում առանձին հավելվածի տեսքով դրանց պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի համար նախանշված վերջնական արդյունքի ցուցանիշները: Հիմք ընդունելով Բյուջետային գրասենյակի նախաձեռնությամբ իրականացված 2025 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքի մոնիտորինգի և դրա արդյունքում ձևավորված տվյալների բազայի արդյունքները, ըստ ԲԳԿ-ների պատրաստվել և ներկայացվել են 2025 թվականի ընթացքում բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով ՀՀ կառավարության որոշումներով կատարված վերաբաշխումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքներ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ 2025թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով համապատասխան հանձնաժողովներին են ներկայացվել է առանձին 37 ԲԳԿ-ների և 10 մարզպետների աշխատակազմերի մասով տեղեկանքներ:

Միաժամանակ, ներկայացվել են Բյուջետային գրասենյակի դիտարկումներն ու առաջարկությունները առանձին ծախսային ծրագրերի վերջնական արդյունքների ցուցանիշների, ինչպես նաև այդ ծրագրերի և միջոցառումների գծով ներկայացված արդյունքային չափորոշիչների և ցուցանիշների բարելավման վերաբերյալ:

2.1.4 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի Բյուջետային գրասենյակի կողմից կազմվել և գլխադասային հանձնաժողով ներկայացվել է 2026 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման վերաբերյալ Կառավարության ներկայացրած հաշվետվության ամփոփ վերլուծությունը:
Այս փաստաթուղթը կազմվել է Բյուջետային գրասենյակի կողմից՝ որպես ԱԺ վերահսկողական գործառույթներին աջակցող վերլուծական նյութ, որի նպատակն է

Ազգային ժողովին տրամադրել հստակ, համառոտ և պատկերավոր տեղեկատվություն՝ ընթացիկ բյուջեի կատարման վիճակի վերաբերյալ:
Բյուջետային գրասենյակը կատարում է այս վերլուծական աշխատանքը՝ ապահովելով վերահսկողական գործընթացների թափանցիկությունն ու ամրապնդելով Ազգային ժողովի կարողությունները ֆինանսական վերահսկողության և բովանդակային քաղաքական գնահատման ոլորտում:

Բյուջեի կատարման ընթացիկ գնահատումը հնարավորություն է տալիս՝

- Ընթացիկ ժամանակահատվածում պատկերացնելու բյուջետային քաղաքականության արդյունքները,
- Վերհանելու հնարավոր շեղումները՝ պլանային ցուցանիշներից,
- Ձևավորելու բավարար հիմք՝ բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և անհրաժեշտ քաղաքական արձագանքների ձևավորման համար:

2026 թվականի առաջին եռամսյակի ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած հաշվետվության մասով ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և գլխադասային հանձնաժողով են ներկայացվել համապատասխան փաստաթղթի **ամփոփ նկարագրերը**[5], որոնք հրապարակվել են նաև Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Վերլուծական ամփոփումներում ներառված են նաև գծապատկերներ, աղյուսակներ և համառոտ մեկնաբանություններ՝ ներկայացնելու սոցիալ-տնտեսական և հարկաբյուջետային հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածում:

2.1.5 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի առաջին կիսամյակի ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած հաշվետվության մասով ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և գլխադասային հանձնաժողով են ներկայացվել համապատասխան փաստաթղթի ամփոփ նկարագրերը, որոնք հրապարակվել են նաև Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Վերլուծական ամփոփումներում ներառված են նաև գծապատկերներ, աղյուսակներ և համառոտ մեկնաբանություններ՝ ներկայացնելու սոցիալ-տնտեսական և հարկաբյուջետային հիմնական միտումները հաշվետու ժամանակահատվածում:

ՀՀ ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվել են հաշվետու ժամանակահատվածին վերաբերող հիմնական ցուցանիշները, մակրոտնտեսական իրավիճակը, պետական բյուջեի կատարողականը, ինչպես նաև առանձին ծրագրերի իրականացման ընթացքն ու

[5] http://www.parliament.am/budget_office.php?sel=reports_and_statements&action=annual_reports&lang=arm&id=707

արձանագրված միտումները: Հանձնաժողովի անդամների և պատգամավորների կողմից հնչեցվել են մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին սոցիալ-տնտեսության ընդհանուր զարգացման տեմպերին, ծախսերի կատարման ընթացքին, ինչպես նաև օրենքով ամրագրված տարեկան բյուջետային ցուցանիշների ապահովման ակնկալիքներին:

2.2 ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի ինն ամիսներին Բյուջետային գրասենյակը շարունակել է իր գործունեությունն՝ ուղղված ԱԺ պատգամավորների և շահառու մյուս հանձնաժողովների, խմբակցությունների տեղեկատվական և վերլուծական պահանջների բավարարմանը: Բյուջետային գրասենյակը պատասխանում է պատգամավորների կողմից ստացված **գրավոր և բանավոր հարցադրումներին**, այդ թվում՝ **էլեկտրոնային փոստով և Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգով** ներկայացված հարցումներին:

Նշված ժամանակահատվածում բոլոր հարցումներին տրվել են պատասխաններ՝ ՀՀ օրենքներով սահմանված ժամկետներում, պահպանելով պատշաճ տեղեկատվական և մասնագիտական որակական չափանիշները:

Հաշվետու ժամանակահատվածում գրավոր և բանավոր հարցման հիման վրա պատրաստվել և տրամադրվել են վերլուծական և ամփոփ տեղեկատվություն հետևյալ ուղղություններով՝

1. ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտներին առնչվող ծրագրերի գծով 2025թ. իրականացված ծախսերի վերաբերյալ:
2. Տեղեկատվության տրամադրում և աջակցություն պատգամավորներին ՀՀ կառավարության ծրագրի 2021-2024թթ կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի վերաբերյալ:
3. Ի պատասխան պատգամավորական գրությամբ ներկայացված հարցման, ներկայացվել են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված և ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտներին առնչվող բյուջետային ծրագրերի գծով իրականացված ծախսերի ֆինանսավորման և կատարողական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանքները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական, գերատեսչական և ծրագրային դասակարգման:
4. Ի պատասխան պատգամավորական բանավոր հարցման, ներկայացվել են տեղեկանքներ 2026 թվականի 1-ին եռամսյակի, հունվար-ապրիլ և հունվար-մայիս ժամանկահատվածների ընթացքում ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված ընդամենը ծախսերի և Առողջության համընդհանուր ապահովագրության միջոցառումների և դրանց գծով ծախսերի կատարողականի վերաբերյալ համեմատական տեղեկանքներ, ինչպես նաև համառոտ տեղեկանք՝

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեում Առողջապահության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող առողջության համընդհանուր ապահովագրությանն ուղղված 1-ին եռամսյակի ծախսերի և դրանց կատարողականի վերաբերյալ:

5. Ի պատասխան պատգամավորական բանավոր հարցման, ներկայացվել է Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում ծրագրերի վերաբերյալ տեղեկանք 2023-2025թթ.:
6. Ի պատասխան պատգամավորական բանավոր հարցման՝ ներկայացվել է համադրելի պարտքի վերաբերյալ տեղեկանք:
7. Ի պատասխան պատգամավորական բանավոր հարցման բանավոր հարցման տրամադրվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի և միջոցառումների գծով ֆինանսական ցուցանիշների 2022-2025 թվականների փաստացի և 2026 թվականի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ, ինչպես նաև 2025 թվականի պետական բյուջեի ծախսերում կատարված վերաբաշխումների և փոփոխությունների վերաբերյալ մանրամասն տեղեկանքներ:

Այս տեղեկատվական աջակցությունը նպատակ ունի նպաստելու ԱԺ խորհրդարանական վերահսկողության սահամադրական լիազորության իրացմանը, բարելավելու բյուջետային գործընթացներում ներգրավված կողմերի տեղեկացվածության մակարդակը և խթանել հիմնավորված քաղաքական որոշումների կայացումը:

2.3 ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2026 թվականի ինն ամիսներին ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակը շարունակել է **ՀՀ պետական բյուջեի, պետական պարտքի և սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների ընթացիկ մշտադիտարկումը**: Մշտադիտարկման արդյունքները վերածվել են հաշվարկային և վերլուծական տեղեկանքների, որոնք ուղեկցվել են գծապատկերներով՝ նպաստելով տեղեկատվության առավել պատկերավոր և մատչելի ներկայացմանը շահառուներին: Համապատասխան տեղեկանքները հրապարակվել են նաև Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում[6]:

Տեղեկանքները տրամադրվել են ՀՀ ԱԺ պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին, իսկ ծախսային ուղղվածություն ունեցող տեղեկանքները՝ համապատասխան ոլորտային հանձնաժողովներին:

[6] http://www.parliament.am/budget_office.php?sel=reports_and_statements&action=references&lang=arm

Մշտադիտարկման տրամադրման պարբերականությունն իրականացվել է.

- **Տասօրյա և ամսական կտրվածքներով՝** ընթացիկ ցուցանիշների վերաբերյալ
- **2025 թվականի փաստացի ցուցանիշների հիման վրա՝** համեմատական վերլուծություններ

Ընթացիկ մշտադիտարկում

Մշտադիտարկման շնորհիվ կարողանում ենք գնահատել բյուջեի կատարողականը, եկամուտների հավաքագրումներն ու ծախսային ծրագրերի ընթացքը, տնտեսության վիճակը, մշտադիտարկման արդյունքում անհրաժեշտության դեպքում առաջարկություններով արձագանքում, հիմք ունենալով ապահովել պետության ֆինանսական կայունությունը: Բյուջեի սահմանված ծախսերը և եկամուտները ճիշտ կերպով կոճակված չեն լինում, ուստի հետևողական մոնիթորինգը կարևոր է շեղումների հայտնաբերման համար:

Սոցիալ-տնտեսական իրավիճակը անընդհատ փոփոխվում է՝ կախված ներտնտեսական և համաշխարհային տնտեսական ազդակներից: Հետևողական մշտադիտարկումը հնարավորություն է տալիս կառավարությանը իրական ժամանակում գնահատել իրավիճակը՝ մասնավորապես ճգնաժամերի, բարձրացվող գործազրկության, գնաճի կամ տնտեսական անկայունության դեպքում:

Մշտադիտարկումը օգնում է, որպեսզի վերահսկող մարմինը կարողանա ճիշտ պատկերացնել կառավարության ծրագրային փոփոխությունները, մասնավորապես ինչպես երկարաժամկետ տնտեսական քաղաքականության համար, այնպես էլ կարճաժամկետ գլոբալ հարցերի համար:

2.3.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մակրոտնտեսական մշտադիտարկումը ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի կարևորագույն գործառույթներից է, որը նպատակ ունի ապահովել տնտեսության զարգացումների համակողմանի վերլուծությունն ու քաղաքականության ձևավորման հիմնավորումը: Այս գործընթացը ներառում է տնտեսության հիմնական ոլորտների դիտարկում՝ սկսած իրական հատվածի զարգացումներից մինչև դրամավարկային ցուցանիշներ և աշխատանքի շուկան: Մշտադիտարկման արդյունքում ստացված տվյալները հնարավորություն են տալիս բացահայտելու մակրոտնտեսական միտումները, գնահատելու ներքին և արտաքին ռիսկերը, ինչպես նաև համարժեք արձագանքելու տնտեսական փոփոխություններին: Մշտադիտարկման շրջանակում պատրաստված տեղեկանքները դասակարգված են բաժիններով, ժամանակագրական հաջորդականությամբ և ներկայացված են Հավելված 1-ում:

Ստորև ներկայացված են մակրոտնտեսական մշտադիտարկման հիմնական ուղղությունները՝ ըստ տնտեսության հատվածների:

1. **Իրական հատված**
   - Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)
   - Արդյունաբերական արտադրության ծավալներ՝ ըստ ոլորտների
   - Շինարարության, բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալներ
   - Առևտրի շրջանառություն և ծառայությունների ոլորտի զարգացումներ
2. **Սպառողական գների ինդեքս**
   - 12 ամսյա և միջին գնաճ
   - Սպառման ապրանքներ, սննդամթերք, խմիչք և ծխախոտ, ոչ պարենային ապրանքներ
   - Ծառայություններ
   - Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգչի (ԱՍԸՆԴ) 12 հատվածների
3. **Արտաքին հատված**
   - Արտաքին առևտրի ծավալներ (արտահանում, ներմուծում)
   - Առևտրի հաշվեկշիռ
   - Արտահանման և ներմուծման ծավալները ըստ երկրների և ապրանքախմբերի
4. **Դրամավարկային հատված**
   - Փողի բազա, զուտ միջազգային պահուստներ
   - Տոկոսադրույքներ՝ ռեպո գործառնություններ, առևտրային բանկերի վարկերի և ավանդների, վարկային կազմակերպությունների վարկերի, ինչպես նաև ծավալներ
   - Արտարժույթի փոխարժեքներ
   - Դրամական փոխանցումներ՝ դեպի Հայաստան և Հայաստանից դուրս տրանսֆերտները ըստ երկրների
5. **Աշխատանքի շուկա**
   - Գրանցված գործազրկության մակարդակ
   - Միջին անվանական աշխատավարձ, ըստ տնտեսական գործունեության տեսակների
   - Աշխատողների թվաքանակը, ըստ տնտեսական գործունեության տեսակների
   - Աշխատանք փնտրող անձանց վիճակագրություն

2.3.2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ

Բյուջետային գրասենյակը նախորդ տարվանից մեկնարկել է **սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող եռամսյակային վերլուծական տեղեկանքների պատրաստումը**, որոնք ունեն վերլուծական խորություն, հասանելիություն և բացատրելիություն:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է.

- ✓ 2025 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ տնտեսական զարգացումները, աշխատանքի շուկայի միտումները, արտաքին հատվածի դինամիկան և գնաճի զարգացումները
- ✓ 2025 թվականի հարկային եկամուտների զարգացումների վերաբերյալ տեղեկատվություն, ըստ հարկատեսակների
- ✓ 2025 թվականի պետական բյուջեի զարգացումների վերաբերյալ տեղեկատվություն (եկամուտներ, հարկային եկամուտներ, այլ եկամուտներ, դրամաշնորհներ, ծախսեր, դեֆիցիտի ֆինանսավորում)
- ✓ 2025 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների հավաքագրումների, կատարողականի և զարգացումների վերաբերյալ
- ✓ 2025 թվականի բյուջետային ուղերձից ՀՀ կառավարության պարտքի շեղումների և 2019-2025 թվականների միտումների վերաբերյալ
- ✓ 2026 թվականի հունվար-մայիս ամիսների պետական բյուջեի այլ եկամուտների հավաքագրումների, կատարողականի և զարգացումների վերաբերյալ
- ✓ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունվար-հունիս ամիսների պետական բյուջեի օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ
- ✓ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի ընթացիկ հունվար-հունիս ամիսների պետական բյուջեի այլ եկամուտների հավաքագրումների, կատարողականի և զարգացումների վերաբերյալ
- ✓ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումների և զարգացումների վերաբերյալ

2.3.3 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Իր գործառույթների շրջանակում ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակը մշտապես հետևում է պետական ֆինանսների ձևավորմանն ու օգտագործմանը՝ նպաստելով հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությանն ու գնահատման օբյեկտիվությանը: Բյուջեի ցուցանիշների մշտադիտարկումը հնարավորություն է տալիս վերլուծելու եկամուտների և ծախսերի կառուցվածքը, դեֆիցիտի ծագման պատճառները

և ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև պետական պարտքի կառավարումը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

Մշտադիտարկման շրջանակում պատրաստված տեղեկանքները դասակարգված են բաժիններով, ըստ հաշվետու ժամանակահատվածների և ներկայացված են Հավելված 1-ում:

Այս համատեքստում, բյուջետային գրասենյակը հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ պետական բյուջեի հետևյալ հիմնական բաղադրիչներին.

1. **Եկամուտներ**
    - Հարկային եկամուտներ, հարկատեսակներով,
    - Այլ եկամուտներ,
    - Պաշտոնական դրամաշնորներ,
2. **Ծախսերն՝ ըստ դրանց դասակարգման տեսակների***
    - Տնտեսագիտական,
    - Գործառական դասակարգում,
    - Գերատեսչական դասակարգում,
    - Ընթացիկ ծախսեր,
    - Կապիտալ ծախսեր,
    - Ծրագրային դասակարգում,
3. **Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրեր**
4. **Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների գծով ելքային ծրագրեր**
5. **Պետական պարտք**
    - Կառավարության պարտք,
    - Համայնքների պարտք,
    - Պարտքի միջին տոկոսադրույք,
    - Կառավարության արտաքին վարկերի սպասարկման և արտաքին վարկային միջոցների ստացում,
    - Կառավարության պարտքի կառավարման 2026-2028թթ. ռազմավարական ծրագրի ուղենշային ցուցանիշներ,
    - Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին,
    - Պետական բյուջեից ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարներ,
    - Վարկային պայմանագրերով ձևավորված ՀՀ կառավարության արտաքին պարտք,
    - Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսեր

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ.

Հաշվետու ժամանակահատվածում Բյուջետային գրասենյակի կողմից իրականացվել է պետական բյուջեի ծախսերի, այդ թվում՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսային ծրագրերի և միջոցառումների ընթացիկ կատարման առցանց դիտարկում, օգտվելով գլխավորապես ՀՀ ֆինանսների նախարարության «LSRep» համակարգից, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքերում տեղադրված տեղեկատվությունից:

Հաշվետու ժամանակահատվածում յուրաքանչյուր նախորդ ամսվա բյուջետային ծախսերի կատարողական (աճողական) ցուցանիշների վերաբերյալ պատրաստվել են՝

- **ամփոփ տեղեկանքներ**՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով ընդամենը ծախսերի, ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերի, վարկային և դրամաշնորհային ծրագրերի, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների գծով ելքային ծրագրերի, ինչպես նաև պետական պարտքի սպասարկման և մարման ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող Պետական պարտքի կառավարման (1006) և Ֆինանսական պարտավորությունների կատարման (1211) ծրագրերի կատարողականը կատարողական ցուցանիշների վերաբերյալ, որոնք ներկայացվել են ԱԺ նախագահի տեղակալներին, խմբակցությունների ղեկավարներին և մշտական հանձնաժողովների նախագահներին,
- **ոլորտային ծախսերի կատարողականի վերաբերյալ տեղեկանքներ**՝ ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական և ծրագրային դասակարգման, որոնք ներկայացվել են ԱԺ մշտական հանձնաժողովներին՝ ըստ վերջիններիս գործունեության ոլորտների համար պատասխանատու գերատեսչությունների:

2026 թվականի հունվար ամսին ներկայացվել են 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի ծախսերի վերաբերյալ տեղեկանքները և հաջորդաբար յուրաքանչյուր ամիս ներկայացվել են 2026 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածի ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարողական (աճողական) ցուցանիշների վերաբերյալ տեղեկանքները: Բյուջեի ծախսերի կատարման ընթացիկ մշտադիտարկման տեղեկանքները պատրաստվում են բյուջետային ծախսերի գործառական, գերատեսչական և ծրագրային դասակարգմամբ, իսկ կապիտալ ծախսերի գծով միջոցառումները՝ նաև տնտեսագիտական դասակարգման հոդվածներով: Դրանք ԱԺ մշտական հանձնաժողովներին ներկայացվում են ըստ հանձնաժողովի գործունեության ոլորտների համար պատասխանատու գերատեսչությունների և ոլորտների և արտացոլում են հաշվետու ժամանակահատվածում համապատասխան գերատեսչությունների պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի

և միջոցառումների գծով ծախսերի կատարման, ինչպես նաև դրանց զարգացման և փոփոխության ընթացքը:

*__Բյուջետային ծախսերի դասակարգումը__

Բյուջեների ծախսերի **տնտեսագիտական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսական բովանդակությանը համապատասխան (ընթացիկ ծախսեր և կապիտալ ծախսեր կամ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ): Այն ցույց է տալիս, թե պետությունը կամ համայնքը կոնկրետ ինչի վրա է ծախսում միջոցները (օրինակ՝ աշխատավարձ, ապրանքների ձեռքբերում, սուբսիդիա և այլն)

Բյուջետային ծախսերի **գործառական (ֆունկցիոնալ) դասակարգումը** հնարավորություն է տալիս բյուջետային ծախսերը խմբավորել ըստ տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս գնահատելու ոլորտային քաղաքականություններին ուղղված միջոցները և դրանց կատարողական ցուցանիշները:

Բյուջետային ծախսերի **գերատեսչական դասակարգումը** հնարավորություն է տալիս խմբավորելու բյուջետային ծախսերն ըստ պատասխանատու գերատեսչությունների (բյուջետային գլխավոր կարգադրիչների), այսինքն՝ կոնկրետ ոլորտային քաղաքականության իրականացման համար պատասխանատու գերատեսչության, ինչն ընդհանուր առմամբ հնարավորություն է տալիս գնահատելու համապատասխան ոլորտի կառավարման և համակարգման արդյունավետությունը:

Բյուջետային ծախսերի **ծրագրային դասակարգմամբ** բյուջետային ծախսերը ներկայացվում են ըստ ծրագրային դասակարգման ձևաչափերի, որի նպատակն է հնարավորինս հանրամատչելի հանրությանը ներկայացնել բյուջետային ծախսերի նպատակային և արդյունքային բովանդակությունը, մասնավորապես, յուրաքանչյուր ծրագրի համար սահմանելով նպատակ և վերջնական արդյունքի նկարագրություն: Ծրագրային դասակարգումը հնարավորություն է տալիս ծախսերը խմբավորել ըստ ոլորտային ծրագրերի՝ ուղղված որոշակի ռազմավարական նպատակի իրագործմանը, իսկ յուրաքանչյուր ծրագրի ներքո արդեն արտացոլվում են դրա շրջանակներում նախատեսվող քաղաքականության միջոցառումները: ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերն ու միջոցառումներն օրենքի առանձին հավելվածում ներկայացված են ծրագրային ձևաչափով (Հավելված N 1 աղյուսակ N 2):

Ամսական պարբերականությամբ պատրաստվող տեղեկանքները ներկայացվում են ՀՀ ԱԺ պատգամավորներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգով:

Հաշվետու ժամանակահատվածում Գրասենյակի կողմից պատրաստվել և համապատասխան հանձնաժողովներին են ներկայացվել հանրային իշխանության թվով 38 մարմինների (ԲԳԿ-ների) և 10 մարզպետների աշխատակազմերի բյուջետային ծախսերի ընթացիկ ցուցանիշների վերաբերյալ տեղեկանքներ, իսկ Քաղաքաշինության կոմիտեի և մարզպետերի աշխատակազմերի մասով նաև դրանց կողմից՝ որպես բյուջետային ստորադաս կարգադրիչ կատարվող միջոցառումների կատարողականի վերաբերյալ տեղեկանքները: Ընդ որում, 2026 թվականին ձևավորվել է Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովը՝ 2025թ. դեկտեմբերի 24-ին ընդունված

«Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքին համապատասխան: Արդյունքում բյուջետային գլխավոր կարգադրիչների (մարմինների) թիվն ավելացել է 1-ով:

2.3.4 ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Պետական բյուջեի կատարման ընթացքի մշտադիտարկման գործառույթի շրջանակներում 2025 թվականից սկսած Բյուջետային գրասենյակի կողմից իրականացվում է նաև ընթացիկ տարվա պետական բյուջեում վերաբաշխումներ և բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների մշտադիտարկում և հաշվառում: Այս որոշումների մշտադիտարկումը հնարավորություն է տալիս՝

- ✓ հետևելու Ազգային ժողովի կողմից ընդունված պետական բյուջեով նախատեսված ծախսերի և ծրագրերի իրականացման ընթացքին, բյուջետային ծախսերի և եկամուտների հաստատված ցուցանիշներում կատարվող փոփոխություններին,
- ✓ գնահատելու վերաբաշխումների և փոփոխությունների ազդեցությունը պետական բյուջե մասին օրենքով նախանշված նպատակների և արդյունքների իրագործման ուղղությունների, ինչպես նաև ծախսային արդյունավետության վրա,
- ✓ կիրառելու ընթացիկ տարվա բյուջեի կատարման ընթացքում իրականացված վերաբաշխումների և փոփոխությունների դիտարկման ու գնահատման արդյունքները առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ,
- ✓ հետևելու ոլորտային քաղաքականությունների իրագործման և ծրագրերի իրականացման ընթացքին:

Այդ նպատակով Բյուջետային գրասենյակի կողմից իրականացվում է՝

- պաշտոնապես հրապարակված ՀՀ կառավարության որոշումների ուսումնասիրություն և հաշվառում,
- ՀՀ կառավարության նիստի օրակարգում ընդգրկված նախագծերի փաթեթների ուսումնասիրություն,
- ՀՀ պետական բյուջեում կատարվող փոփոխությունների և վերաբաշխումների նպատակների և անհրաժեշտության հիմքերի ուսումնասիրություն, համապատասխան թվային տվյալների շտեմարանի պատրաստում,
- Mulberry համակարգի «Նիստեր» բաժնում տեղադրված նյութերի, այդ թվում՝ նախարարական կոմիտեներիում դրանց քննարկումների արդյունքների ուսումնասիրություն:

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների հիման վրա լրացվել է Բյուջետային գրասենյակի կողմից վարվող տվյալների բազան: Այս գործընթացը հնարավորություն է տալիս բյուջետային ծրագրերի միջոցառումների մակարդակով ստանալ ամփոփ տվյալներ ֆինանսական ցուցանիշների և ՀՀ կառավարության կողմից դրանց վերաբաշխումների և փոփոխությունների վերաբերյալ:

2026 թվականի ինն ամսում ՀՀ կառավարության կողմից ընդունված և գրասենյակի կողմից հաշվառված ՀՀ կառավարության որոշումների քանակական տվյալները ներկայացված են կից Հավելված 1-ում:

2.3.5 ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Բյուջետային գրասենյակը իրականացնում է մակրոտնտեսական և **պետական բյուջեի ցուցանիշների փաստացի ցուցանիշների թվայնացում և պարբերաբար թարմացում՝** ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքներով: Թվայնացումը նպատակ ունի ապահովել տվյալների համակարգված պահպանում, արագ վերլուծության հնարավորություն, Ազգային ժողովի տարբեր ստորաբաժանումների հարցումներին **ճկուն և օպերատիվ արձագանքելու** հնարավորություն:

Հաշվետու ժամանակահատվածում թվայնացվել են տվյալներ՝

- Հարկային եկամուտները՝ ըստ հարկատեսակների (ԱԱՀ, շահութահարկ, եկամտահարկ և այլն),
- Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը,
- Պետական բյուջեի այլ եկամուտները,
- Պետական պարտքը,
- Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները ըստ հատվածների,
- Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրեր(տարեկան):

Թվայնացված տվյալների հիման վրա Բյուջետային գրասենյակը իրականացնում է վերլուծական հաշվարկներ, այդ թվում՝

- Տարվա ընթացքում ամսական կտրվածքով և տարբեր ժամանակահատվածներում ցուցանիշների աճի տեմպերը,
- Տարբեր ցուցանիշների կշիռները ընդհանուր ցուցանիշի կազմում,
- Յուրաքանչյուր ցուցանիշի նպաստումը՝ ընդհանուր ցուցանիշի աճին (contribution analysis),
- Տվյալների գրաֆիկական ներկայացում:

Այս վերլուծությունները կարևոր դեր են խաղում հարկաբյուջետային քաղաքականության գնահատման, ինչպես նաև կայունության և քաղաքական ուղղությունների վերլուծության գործում՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին ավելի հիմնավորված պատկերացում կազմել ֆինանսատնտեսական ընթացիկ իրավիճակի մասին:

2.4 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԺ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

2026 թվականի ինն ամիսներին ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի փորձագետները մասնակցել են Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի **բոլոր նիստերին**: Նիստերի ընթացքում քննարկվել են պետական ֆինանսների կառավարման հետ կապված մի շարք ռազմավարական կարևորություն ունեցող հարցեր, այդ թվում՝

- «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին,
- «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին
- Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2025 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց,
- 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ,
- 2026 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի և կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին:

Բյուջետային գրասենյակի մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին էական նշանակություն է ունեցել քննարկումների ընթացքում համապատասխան տեղեկատվության, մասնագիտական վերլուծությունների և քաղաքականության մշակմանն աջակցող առաջարկությունների ներկայացման տեսանկյունից: Այս ներգրավվածությունն ուղղված է եղել բյուջետային գործընթացների հաշվետվողականության, թափանցիկության և հիմնավորված որոշումների կայացման մակարդակի բարձրացմանը:

Հանձնաժողովի նիստում Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը ներկայացրել է 2025 թվականի ընթացքում գրասենյակի կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Բյուջետային գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գենդերազգայուն բյուջետավորման առաջխաղացում» ծրագրի շրջանակում անցկացված քննարկմանը, որը տեղի է ունեցել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի, ԱԶԲ գենդերային հարցերով պատասխանատու Թամար Բորցվաձեի և ազգային խորհրդատու Կարինե Հարությունյանի մասնակցությամբ: Քննարկումն առանձնահատուկ կարևորություն ունի բյուջետային գործընթացների արդյունավետության և ներառականության բարձրացման տեսանկյունից, քանի որ այն վերաբերում էր գենդերազգայուն բյուջետավորման մեթոդաբանական մոտեցումներին և դրանց ինտեգրմանը ծրագրային բյուջետավորման համակարգում:

Բյուջետային գրասենյակի փորձագետների և ազգային ժողովի աշխատակզմի ղեկավար-գլխավոր քարտուղարի տեղակալի հետ տեղի է ունեցել քննարկում ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի կարգավիճակին ուղղված խնդիրների վերհանման, բարեփոխումների տեսլականի շուրջ և արդյունքում գրասենյակի կողմից տրամադրվել է աշխատանքների իրականացման փուլային ճանապարհային քարտեզ:

2026 թվականի սեպտեմբերի 23-25-ը Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը մասնակցել է ԱՊՐԻ ֆորում 2026-ին, որն այս տարի կրում էր «Ուրվագծելով փոփոխության ճարտարապետությունը» խորագիրը:

Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի անդամների հետ միասին սեպտեմբերի 23-ին հանդիպել են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հայաստանյան առաքելության ղեկավար Ալեքսանդր Թիմանի գլխավորած պատվիրակության հետ: Անդրադարձ է կատարվել բյուջետային գրասենյակին տեխնիկական աջակցություն տրամադրելու հարցում, որոնք կարող են ուժեղացնել գրասենյակի կարողությունները՝ բյուջետային վերլուծություն իրականացնելու գործում :

Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորների հետ միասին սեպտեմբերի 28-ին հանդիպել են Դանիայի գործարարների ցանցի (DANEX) ներկայացուցիչների հետ:

2.5 ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Բյուջետային գրասենյակը շարունակել է բարելավել իր գործառնական արդյունավետությունը՝ խթանելով աշխատակազմի կարողությունների

զարգացումը և տվյալների կառավարման համակարգերի կատարելագործումը: Գործունեության առանցքային ուղղություններն ընդգրկել են հետևյալը՝

1. **Աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացում** Իրականացվել են շարունակական օնլայն վերապատրաստման գործընթացներ՝ ուղղված մասնագիտական գիտելիքների և հմտությունների խորացմանը: Շարունակական վերապատրաստումները կնպաստեն բյուջետային գրասենյակի կարողությունների բարձրացմանը՝ համալիր վերլուծությունների և տվյալների վերամշակման առումով:
2. **Տվյալների բազաների արդիականացում և կատարելագործում** Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են տվյալների բազաների կառուցվածքային բարելավման և բովանդակային թարմացման աշխատանքները: Կատարված բարեփոխումները նպատակաուղղված են եղել տվյալների ամբողջականության, ճշգրտության և ժամանակին մատչելիության ապահովմանը՝ ապահովելով առավել հուսալի հիմք վերլուծությունների իրականացման և տվյալահեն որոշումների կայացման համար:
3. **Արձագանքման գործընթացների օպտիմալացում** Կատարագործվում են մեխանիզմներ, որոնք թույլ կտան բյուջետային գրասենյակին առավել օպերատիվ և արդյունավետ կերպով արձագանքել Ազգային ժողովի պատգամավորների, խմբակցությունների, հանձնաժողովների կողմից ստացվող հարցումներին:

Այս ուղղություններով իրականացված և անընդհատ կատարելագործվելու աշխատանքները համապարփակորեն նպաստել են բյուջետային գրասենյակի գործառութային նպատակների իրագործմանը և նպաստել առավել հիմնավորված, տվյալահեն որոշումների կայացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում գրասենյակի փորձագետները մասնակցել են հետևյալ մասնագիտական միջոցառումներին.

- ✓ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված ՀՀ 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2027 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման մեթոդական ցուցումների ներկայացմանը նվիրված առցանց սեմինար-խորհրդակցությանը, որտեղ ընդհանուր առմամբ ներկայացվել են գործընթացի կարևոր ժամկետները և պահանջները, նախորդ գործընթացի համեմատ ներդրված փոփոխությունները և ընդհանուր ցուցումներ բյուջետային հայտերի ներկայացման վերաբերյալ (04.02.2026թ.):
- ✓ «Գենդերազգայուն բյուջետավորում. աշխատանքների պլանավորման և կարողությունների զարգացման աշխատաժողով», որը կազմակերպվել էր Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից իրականացվող «Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գենդերազգայուն բյուջետավորման

առաջխաղացում» տեխնիկական աջակցության ծրագրի (TA 10587) շրջանակներում: Ծրագիրը նպատակ ունի աջակցել Կառավարությանը գենդերային հավասարության խթանման գործընթացում՝ հանրային ֆինանսների կառավարման համակարգում գենդերազգայուն բյուջետավորման (ԳԶԲ) մոտեցումների և գործիքների ներդրման ու կիրառման միջոցով:

- ✓ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) աջակցությամբ՝ օնլայն ձևաչափով հանդիպում է տեղի ունեցել Հետազոտության և վերապատրաստման կենտրոնի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են խորհրդարանի դերը պետական ֆինանսների կառավարման, մասնավորապես՝ պետական բյուջեի եկամուտների մոբիլիզացման (DRM) և բյուջետային վերահսկողության հարցեր:
- ✓ «Ասիական զարգացման բանկի կողմից (ԱԶԲ) կազմակերպված Գենդերազգայուն բյուջետավորման աշխատանքների պլանավորման և կարողությունների զարգացման դասընթաց-աշխատաժողովին», որտեղ ներկայացվել է գենդերազգայուն բյուջետավորման նոր ներդրվող մեթոդական ձեռնարկը, բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակից ու պատասխանատու գերատեսչությունները, ընթացակարգերը, որոնք ամրապնդվել են գործնական աշխատանքների տեսքով:
- ✓ Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը 2026թ. ապրիլի 27-ից մինչև մայիսի 1-ը՝ մասնակցել է Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) «Ֆիսկալ ռիսկերի կառավարում. գործնական մոտեցում» (JV26.12) դասընթացին/Վիեննա/:

Կարողությունների զարգացմանն ուղղված նման նախաձեռնությունները նպաստում են ինչպես մասնագիտական կարողությունների խորացմանը, այնպես էլ բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացումը շարունակական հիմքի վրա ապահովելու գործընթացին:

2.6. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը, իր գործունեության շրջանակում և ստանձնած հիմնական գործառույթներից բացի, անհրաժեշտության դեպքում իրականացնում է նաև այլ և չնախատեսված գործառույթներ: Դրանք կարող են ներառել մասնակցություն տարբեր ոլորտային քննարկումներին, խնդիրների վերհանում և մասնագիտական եզրակացությունների ներկայացում, որոնք նպաստում են Ազգային ժողովի վերահսկողական և օրենսդրական կարողությունների հզորացմանը, տարբեր օրենքների նախագծերի մասով առաջարկների ներկայացմանը և այլ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԺ կողմից իրականացվող «1024-11001 ՀՀ Ազգային ժողովի գործունեության ապահովում, օրենսդրական, վերլուծական և ներկայացուցչական ծառայություններ» միջոցառման գծով ՀՀ 2027–2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2027 թվականի պետական բյուջեի

նախագծի արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասով ներկայացվել են դիտարկումներ ու առաջարկություններ:

ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի գործառույթները արդիականացնելու, ինչպես նաև կարգավիճակի իրավական կարգավորման, համակարգային խնդիրները վերհանելու և լուծումներ գտնելու առնչությամբ պատրաստվել է «ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի կարգավիճակին ուղղված խնդիրների վերհանում, բարեփոխումների տեսլական և փուլային ճանապարհային քարտեզ»:

Գրասենյակի գործունեության հետագա կատարելագործման, իրավական և ինստիտուցիոնալ կարգավորումների բարելավման, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով կազմվել է «Խորհրդարանական բյուջետային գրասենյակների և նման հաստատությունների միջազգային փորձի ուսումնասիրման հարցաշար»:

Կազմել է վերը նշված «Խորհրդարանական բյուջետային գրասենյակների և նման հաստատությունների միջազգային փորձի ուսումնասիրման հարցաշար»ի ՀՀ ազգային ժողովի բյուջետային գրասենյակին առնչվող հարցերի պատասխանները:

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ իրականացվել է միջազգային փորձի, գոյացող ռիսկերի ուսումնասիրություն: Համակարգող մշտական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծի փաթեթի ուսումնասիրությանը, և դրա վերաբերյալ առաջարկությունների և դիտարկումների արդյունքները ամփոփելով տեղեկանքի ձևով ներկայացվել է համակարգող մշտական հանձնաժողովի նախագահին:
- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Կառավարության նախագիծի վերաբերյալը Բյուջետային գրասենյակի փորձագետների վարձատրության գործակիցների վերանայմանն ուղղված մոտեցումների ու հիմնավորումների վերաբերյալ ուսումնասիրություն և առաջարկության ներկայացում:
- ԱԺ Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստվել և բոլոր նորընտիր պատգամավորիներին տրամադրվել է ուղեցույց բյուջետային գրասենյակի աջակցությունից օգտվելու վերաբերյալ:

ՄԱՍ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակը, ունենալով հստակ ձևավորված առաքելություն և գործառույթային շրջանակ, բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք պահանջում են համապարփակ և համակարգված արձագանքներ՝ գրասենյակի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով:

1. **ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ, կարողությունների զարգացում**

Միջազգային փորձագետների կողմից Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը գնահատվել է որպես կայացած կառույց, որը պետք է որպես ինստիտուցիոնալ կառույց ընդլայնի իր գործառույթները և լիազորությունները, ինչպես նաև քայլեր ձեռնարկի ներքին կարողությունների զարգացման ուղղությամբ:

Բյուջետային գրասենյակն իր գործունեության բարելավման և բարեփոխման նպատակով նախանշել է հետևյալ կարևոր ուղղությունները՝

- ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի դերի ու նշանակության բարձրացումը՝ որպես ԱԺ վերահսկողության կարևոր գործիք,
- Բյուջետային գրասենյակի կարգավիճակի հստակեցում պետական իշխանության համակարգի կառուցվածքում,
- Գրասենյակի փորձագետների իրավական կարգավիճակի հստակեցում՝ պետական պաշտոնների և պետական ծառայության պաշտոնների համակարգի ներսում՝ օրենսդրությամբ սահմանված կարգավորումների շրջանակներում,
- Գրասենյակի փորձագետներին ներկայացվող պահանջների և պատասխանատվության շրջանակների, այդ թվում՝ մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման օրենսդրական պահանջի ամրագրում,
- Գրասենյակի փորձագետների սոցիալական երաշխիքների սահմանում՝ օրենսդրական կարգավորումների միջոցով:

2. **Տվյալների կառավարման բարելավման կարիք**

Թվայնացման գործընթացը, չնայած դրական քայլերին, դեռևս լիարժեք ավարտուն չէ: Կան կարիքներ տվյալների ավտոմատացված հավաքագրման, մշակման և վիզուալ ներկայացման գործիքների համահունչ ներդրման և ինտեգրման ոլորտներում:

3. **Օպերատիվության բարձրացման անհրաժեշտություն**

Տեղեկատվական հարցումներին և վերլուծական պահանջներին արձագանքելու ժամկետները հաճախ լինում են սուղ, ինչը պահանջում է առավել ճկուն համակարգ և աշխատանքի կազմակերպման նորարարական մոտեցումներ՝ ներառյալ կանխատեսման մեխանիզմների ներդրում:

4. **Շարունակական համագործակցության և իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն**

Բյուջետային գրասենյակի գործունեության ընթացքում արձանագրվում է Ազգային ժողովի հանձնաժողովների և պատգամավորների կողմից աճող պահանջ՝ ստանալու ոչ

միայն թվային ցուցանիշներ, այլ նաև տնտեսական և բյուջեի ցուցանիշների զարգացումները բնութագրող վերլուծական տեղեկանքներ: Սակայն ներկայումս գործող օրենսդրական կարգավորումները սահմանափակում են բյուջետային գրասենյակի գործառույթները բացառապես փաստացի ցուցանիշների տրամադրմամբ, իսկ վերլուծական աշխատանքների իրականացումը ուղղակիորեն արտահայտված չէ իրավական հիմքերում: Այդպիսի համագործակցությունն ու իրավական հստակեցումը կնպաստեն ինչպես բյուջետային գործընթացների թափանցիկությանը և արդյունավետությանը, այնպես էլ գրասենյակի կարողությունների լիարժեք իրագործմանը, որպես ԱԺ-ին աջակցող անկախ վերլուծական կառույց:

5. Հանրային ֆինանսների զարգացող միջավայր

Տնտեսական և հարկաբյուջետային զարգացումները, ներառյալ համաշխարհային մակրոտնտեսական փոփոխությունները, պահանջում են գրասենյակից առավել խորը վերլուծական մոտեցում և հարմարվողականություն: Այս համատեքստում մեծանում է բյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատման և հիմնավորված առաջարկությունների ներկայացման կարիքը:

6. Հասարակական պահանջների աճ

Բարձրացել է Ազգային ժողովի պատգամավորների և հանրային շահառուների տեղեկատվական պահանջների մակարդակը՝ թե՛ բովանդակային, թե՛ մատուցման ձևի առումով: Սա դնում է բարձր նշաձող գրասենյակի առջև՝ որպես անաչառ, վերլուծական և քաղաքականությունից անկախ կառույց:

Այս մարտահրավերները դիտարկվում են ոչ թե որպես խոչընդոտ, այլ՝ որպես զարգացման հնարավորություններ: Բյուջետային գրասենյակը միտված է դրանց նկատմամբ ցուցաբերել կանխատեսելի, կառուցողական և լուծումահեն մոտեցում՝ հանուն Ազգային ժողովի որոշումների կայացման գործընթացում մասնագիտական աջակցության շարունակական բարձրացման:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՈՒՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 12 տեղեկանք



1. ՀՀ մակրոտնտեսական հիմնական օպերատիվ ամփոփ ցուցանիշներ. 2025թ. դեկտեմբեր
2. ՀՀ մակրոտնտեսական հիմնական օպերատիվ ամփոփ ցուցանիշներ. 2026թ հունվար
3. ՀՀ մակրոտնտեսական հիմնական օպերատիվ ամփոփ ցուցանիշներ. 2026թ փետրվար
4. ՀՀ մակրոտնտեսական հիմնական օպերատիվ ամփոփ ցուցանիշներ. 2026թ մարտ
5. ՀՀ մակրոտնտեսական հիմնական օպերատիվ ամփոփ ցուցանիշներ. 2026թ մայիս
6. ՀՀ 2026 թվականի հունվար ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ)
   - Տնտեսական զարգացումներ
   - Արտաքին հատված
   - ՍԳԻ
   - Աշխատանքի շուկա
   - Դրամավարկային հատված
   - Հարկաբյուջետային հատված
7. ՀՀ 2026 թվականի հունվար-փետրվար ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):
8. ՀՀ 2026 թվականի հունվար-մարտ ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):
9. Հարկաբյուջետային հատված ՀՀ 2026 թվականի հունվար-ապրիլ ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):
10. ՀՀ 2026 թվականի հունվար-մայիս ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):
11. ՀՀ 2026 թվականի հունվար-հունիս ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):
12. ՀՀ 2026 թվականի հունվար-հուլիս ամսվա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ (6 հատվածի մասով տեղեկանքներ և գծապատկերներ):

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ , 24 տեղեկանք

1. 2021-2025 թվականների պետական բյուջեի հարկային եկամուտների եվ պետական տուրքերի վերաբերյալ (օպերատիվ տեղեկատվություն դեկտեմբերի 31-ի դրությամբ)
2. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ)
3. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ)
4. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ)



5. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի փետրվարի 20-ի դրությամբ)
6. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի փետրվարի 28-ի դրությամբ)
7. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի մարտի 10-ի դրությամբ)
8. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի մարտի 20-ի դրությամբ)
9. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի մարտի 31-ի դրությամբ)
10. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի ապրիլի 10-ի դրությամբ)
11. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի ապրիլի 20-ի դրությամբ)
12. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի ապրիլի 30-ի դրությամբ)
13. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի մայիսի 20-ի դրությամբ)
14. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի մայիսի 31-ի դրությամբ)
15. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հունիսի 10-ի դրությամբ)
16. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հունիսի 20-ի դրությամբ)
17. 2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ)

18. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հուլիսի 10-ի դրությամբ)**
19. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հուլիսի 20-ի դրությամբ)**
20. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի հուլիսի 31-ի դրությամբ)**
21. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի օգոստոսի 10-ի դրությամբ)**
22. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ)**
23. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ)**
24. **2026 թվականի հարկային եկամուտների հավաքագրումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն(2026 թվականի սեպտեմբերի 20-ի դրությամբ)**



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Բյուջետային ծախսերի ընթացիկ (ամսական) մշտադիտարկման գործառույթի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում գրասենյակի կողմից պատրաստվել և ԱԺ մշտական հանձնաժողովներին տրամադրվել է թվով 942 տեղեկանք, որից՝

- **բյուջետային ծախսերի կատարողականի վերաբերյալ ամփոփ տեղեկանքներ՝ 145,**
- **ոլորտային ծախսերի և առանձին գերատեսչությունների ծախսերի գծով՝ 797:**

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության կողմից ընդունվել և գրասենյակի կողմից հաշվառվել ու դիտարկվել է ՀՀ 2026 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թվով 273 որոշում, որոնց հիման վրա լրացվել է Բյուջետային գրասենյակի կողմից վարվող տվյալների բազան: Այս գործընթացը հնարավորություն է տալիս բյուջետային ծրագրերի միջոցառումների մակարդակով ստանալ ամփոփ տվյալներ ֆինանսական ցուցանիշների և ՀՀ կառավարության կողմից դրանց վերաբաշխումների և փոփոխությունների վերաբերյալ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ և ՀՀ կառավարության պարտքի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, 10 տեղեկանք



1. 2023-2025թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)
2. Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի վերաբերյալ (2026 թ հունվարի 31-ի դրությամբ)
3. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի և կառավարության պարտքի վերաբերյալ (2026 թ փետրվարի 28-ի դրությամբ),
4. Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի վերաբերյալ (2026 թ մարտի 31-ի դրությամբ),
5. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (2026 թ. մարտի 31-ի դրությամբ),
6. Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի վերաբերյալ (2026 թ ապրիլի 30-ի դրությամբ):
7. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (2026 թ ապրիլի 30-ի դրությամբ):
8. ՀՀ պետական և կառավարության պարտքի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ ամսական տեղեկատվություն
9. ՀՀ պետական և կառավարության պարտքի վերաբերյալ 2026 թվականի հուլիսի 31-ի դրությամբ ամսական տեղեկատվություն
10. ՀՀ պետական և կառավարության պարտքի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ամսական տեղեկատվություն

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, 10 տեղեկանք

1. 2023-2025թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր), ըստ երկրների



2.2023-2025թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր), ըստ երկրների

3.2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար), ըստ երկրների

4. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (փետրվարի 28-ի դրությամբ) ըստ երկրների:

5. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (մարտի 31-ի դրությամբ) ըստ երկրների:
6. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (ապրիլի 30-ի դրությամբ) ըստ երկրների
7. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (մայիսի 31-ի դրությամբ) ըստ երկրների
8. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունիսի 30-ի դրությամբ) ըստ երկրների
9. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հուլիսի 31-ի դրությամբ) ըստ երկրների
10. Տեղեկանք 2024-2026թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (օգոստոսի 31-ի դրությամբ) ըստ երկրների